

յանկերդ մը գիտէր, որ միշտ կը կրկնէր սըր-տանց —

«Ետ մէ՞րի մի»:

Բինա կը կատակէր, կը ծիծաղէր մանկան մը միամտութիւնն հեղինող կնոջ մը ծիծաղով:

Երկու շաբաթ վերջ, երեկոյ մը, Վարդան սովորականի պէս ճաշարանէն ուղղակի տուն եկաւ: Իր ոտքերուն քսուելով, սանդխամատերէն վեր կ'ելլէր նաեւ կատուն: Կատուն իր շուրջը կը դառնար, կը մլաւէր: Վարդան, երբ Բինային սենեակը բացաւ, կատուն իրմէ առաջ ներս սահեցաւ ու, նորէն ետ դառնալով, Վարդանին նայեցաւ ա՛յնքան աւերակ ու մարդկային նայուածքով:

Վարդան շուարեցաւ պահ մը:— Բինայի անկողինը քակուած էր: Սեղանին վրայի փոշիներուն տուփերն ու անուշահոտ իւղերու շիշերը չկային: Հայելիին առջեւ ու հայելիին մէջ դողացող սպիտակ ու նիհար լէյլան չկար: Զկար եփնոսէ փոքրիկ խաչը՝ դիմացի պատէն կախուած: Սենեակը աւերակ մըն էր՝ ճիշդ այն կատուի աչքերուն պէս:

Վարդան ամայութիւն մը գլղաց ու թերեւ

իր կեանքին մէջ առաջին անգամ սկսաւ լալ:

Բինան չկար:

Տեղափոխուած է, ոտտիկանները ձերբակալած են, թէ անձնասպան եղած է:

Բինան այլեւս չվերադարձաւ:

* * *

Վարդան իր սովորական կեանքին վերսկսաւ: Ոչ ոքի պատմեց: Բարեկամները նկատած էին, որ Վարդան աւելի լուսկեաց էր դարձեր, կատակի շատ չէր դիմանար: Ամէն երեկոյ սրճարանին մէջ թուղթ խաղացողներուն քով կը նստէր լուռ ու կը դիտէր ժամերով: Որոշեալ ժամուն սենեակ կուզար: Անկողնին մէջ, իր թեւերը իրարու մէջ կը ծալէր, սրունքները կը կծկէր ու այգին նետուած կրիայի մը պէս երազին գիրկը կ'իյնար:

Բինան Վարդանի երազին մէջէն մէկ անգամ միայն անցած էր: Յրջուն վարսերով, կապոյտ շրջազգեստով, բոպիկ ոտքերով Վարդանին մտեցած էր ու ճերմակ չապիկին վրայ ուղած էր սեւ կոճակ մը կարել:

(Շար.)

ՅՈՎՆԱՆ ԴԱԽԹԵԱՆ

Գրեց՝ Մ. ՎԱՐԴԱՆԴԵԱՆ

1918 թ. փետրուարի վերջերը մեռաւ Յովնան Դաւթեանը, մէկը Հ. Յ. Դանիակցութեան համեստ, բայց ամենամաքուր, ամենախղճալիստ վեթերաններից: Քրիստափորի, Զաւարեանի, Նիկոլի, Իւսուֆեանի ու Ռօստօմի մտերմագոյն մտերիմներից էր: Նա հըրապարակ եկաւ կուսակցութեան արչալոյսին, 30 տարի առաջ, սպրեց կազմակերպական հարուստ ու արեւմտի կեանքը, սպրեց թափառելով ու տառապելով, ժընեւ, Թաւրիզ, Բագու, Թիֆլիս, Շուշի, Պոլիս, սպա նորէն Թաւրիզ ու նորէն ժընեւ, ուր եւ մեռաւ երկարատեւ ու սրտմաշուք հիւանդութիւնից յետոյ, մեռաւ նոյն «Իրօջակ» խմբադրատանը, ուր ուղիղ երկու տարի առաջ մեռել էր նոյնպէս երկար ու անողոք հիւանդութիւնից յետոյ, իր սիրած ամուսինը, սքանչելի եւ անմոռանալի Զուլեյխարուհին — չորքսնիս:

Մէկը միւսի դոճն էր. չգիտեմ՝ ո՞րը որի, հաւանականօրէն — իրարու... Մի մեծ ու յուզիչ վէպ է, մի արտասուելի ողբերգութիւն՝ այդ տարբարախո գոյգի կեանքը: Ռօստօմ, որ գալիս էր հետո շայց հորիզոններից դէպի Լէմանի դեղածիծաղ արիերը, գալիս էր լի դադարաբական տենչերով, — եւ Զիւլիետտան, զուիցերիական բնութեան դաւակ, վառվռուն ու յափշտակուող մատաղահաս մի վարժուհի՝ գալիս է նրան ընդ առաջ, մի գարմանալի, նախախնամական գիպուածով, դալիս է հմայուած հայ գործիչի եւ յեղափոխականի ջինջ ու ազնիւ նկարագրով: Եւ երկու կեանքերը հիւսուած են իրար, որպէսզի ամբողջ քառորդ դար սպրեն, գործեն ու տառապեն միասին: Եւ օրիորդը մի ապշեցուցիչ արագութեամբ սովորում է հայ լեզուն, գրականութիւնն ու պատմութիւնը, սովորում է